«ԱՍՊԱՐԷԶ»-Ի ԵՐԵՍՆԱՄԵԱԿԸ

Երեսուն տարի առաջ, 1909-ին, Փալիփորնիոյի Ֆրեզնո քաղաքում, մի խումբ մտաւորական ու դաշնակցական երիտասարդներ, հիմք էին դրել «Ասպարէզ» շաբաթաթերթի, որ, յաղթահարելով հայ մամուլին յատուկ բոլոր դժուարութիւնները՝ այսօր արդէն մնայուն եւ ինքնապահ գործ է՝ իր սեփական շէնքով, տպարանով եւ համակիրների լայն շրջանակով: Երեսնամեակի առթիւ խմբագրութիւնը լոյս է ընծայել պատկերազարդ մի «Բացառիկ», որ, բացի ընդհանուր բաժիններից, իր մէջ պարունակում է տեղեկութիւններ նաեւ թերթի անցեալ կեանքի մասին: Սրտանց շնորհաւորում ենք եւ մաղթում ենք նորանոր յաջողութիւններ այդ համեստ, բայց իր միջավայրի համար շատ օգտակար ձեռնարկին:

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՈՄԻՒՐՃԵԱՆԻ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանից լոյս է տեսել Ե. Զ. Քէոմիւրճեանի «Օրագրութիւն»-ը Մեսրոպ Արք. Նշանեանի հրատարակութեամբ — 715 + ՃԽԴ էջնոց փառաւոր մի հատոր, որ կազմում է «Դուրեան Մատենադարան»ի 13-րդ թիւը: Արժէքաւոր եւ մեր 17-րդ դարու պատմութեան համար անգնահատելի աղբիւր է Նշանեան Արք.-ի լոյս ընծայած գործը: Գրքին կցած է Թորգոմ Պատրիարքի յառաջաբանը եւ հրատարակչի կազմած ընդարձակ «Ներածութիւն»-ը Ե. Զ. Քէոմիւրճեանի կեանքի եւ գործի մասին: Հատորի վերջը, իբրեւ յաւելուած, տրուած են հեղինակի թղթերը, ուղերձները, գանձերն ու ողբերը, այլ եւ օտար եւ ռամկական բառերի բառարանն ու յատուկ անունների ցանկը: Գիրքը արժէ 4 շիլին եւ, անշուշտ, պիտի գրաւէ հայ բանասէրների եւ պատմութեամբ զբաղողների ուշադրութիւնը: